ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱԿՈՒՆՔ ԵՎ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

ՀՏԴ 719
ԳՄԴ 79.0
Կ 294

Հեղինակ **Սամվել Կարապետյան**
Գիտական խմբագիր **Էմմա Աբրահամյան**
Խմբագիր-սրբագրիչ **Հասմիկ Հովհաննիսյան**
Համակարգչային ձևավորող **Արմեն Գևորգյան**
Չափագրությունների հեղինակ **Աշոտ Հակոբյան**

Սամվել Կարապետյան
Կ 294 **Ակունք և Կաթնաղբյուր գյուղերի պատմական հուշարձանները.** / Ս. Կարապետյան.- Եր.: ՀԵՈՒ հիմնադրամ, 2014 - 20 էջ:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում սույն գրքույկի հովանավոր հարգարժան Վարդան Հարությունյանին

Հայրենիքն անհուն նվիրումի և ոգեղենության միակ աղբյուրն է, ազգերի գոյությունն իմաստավորած գերակա արժեքը:

Հայրենիքն ակունքն է մարդուն տրված ազնվագույն և ամենից անկեղծ զգացումի՝ հայրենասիրության, որի խմորիչն էլ հայրենաճանաչությունն է:

Այո՛, սիրելու համար պետք է ճանաչել, ուստի և Հայրենիքը սիրելու համար պայման է, որ անհատը լինի հայրենաճանաչ:

Ազգերի պատմությունը ցույց է տվել, որ բազում մահաբեր խութերով դարերը պատվով են հաղթահարել այն ազգերը, որոնց հայրենաճանաչությունը բյուրեղացել և վերածվել է Հայրենիքի պաշտամունքի, որի պայմաններում հաղթանակն ապահովված է եղել նույնիսկ անկախ ուժերի քանակական անհամաչափությունից:

Ոգեղեն արժեքներով առաջնորդվող և ըստ այդմ ուժեղ, իսկ սրանով էլ պայմանավորված՝ երջանիկ հասարակություն ունենալու համար անքննելի անհրաժեշտություն է, որ նույն հասարակության յուրաքանչյուր մասնիկը լինի հայրենաճանաչ, որն էլ բնականորեն սկիզբ է առնում հարազատ ծննդավայրի ճանաչողությունից:

Հուսով ենք, որ սույն գրքույկն իր համեստ ներդրումը կունենա մեզանում այնքան անհրաժեշտ հայրենաճանաչության խորացման գործի մեջ:

Կեցցե՛ն մեր հայրենաճանաչ հայրենակիցները, փա՛ռք սրբազան Հայրենիքին:

ՀՏԴ 719
ԳՄԴ 79.0

ISBN 978-9939-843-18-6

© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2014
© Կարապետյան Սամվել, 2014

Ակունք գյուղն արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.) և սխեմատիկ հատակագիծը (հեղ.՝ Ա. Հակոբյան, 2014 թ.)

ԱԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Տեղադրություն. գտնվում է Աբովյան քաղաքից 5 կմ արևելք՝ Հատիս լեռան հարավային ստորոտին՝ Նորգյուղ և Ձառ գյուղերի միջակայքում: Ծովի մակերևույթից բարձր է 1445-1488 մ:

Անվանում. Ակունքը Կոտեից գավառի այն գյուղերից է, որ բազում դարեր զուտ հայաբնակ լինելով՝ 1604 թ. Շահաբասյան բռնագաղթից հետո որոշ ժամանակ մնում են ամայի և պատմական անունը մոռացության մատնում: Խանական տիրապետության շրջանում ստանում է օտարոտի՝ Բաշգյուղ անվանումը, որն էլ 1946 թ. վերանվանվում է Ակունք:

Բնական միջավայրը. Ակունքը հայտնի է ոչ միայն այս գյուղի, այլև ողջ գավառի, իսկ մեր ժամանակներում նաև քաղաքամայր Երևանի համար կարևոր նշանակություն ունեցող գյուղամերձ աղբյուրներով. «...մերձ յայս գիւղ բոխին աղբերակունքն ջրոյ այսր գաւառի»[1]:

1 Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ **Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց Շահրիարցւոյ** միաբանի սրբոյ Էջմիածնի, հատոր Բ, Ս. Էջմիածին, 1842, էջ 161:

Ակունք գյուղը հարավից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.) և տեսքը տիեզերքից (լուս.՝ Google Earth, 2013 թ.)

Բնակչություն. գյուղի մասին մատենագրական վկայություններ չունենք, սակայն տեղում պահպանված և առնվազն մինչև վաղ միջնադար հասնող նյութական մշակույթի հուշարձանները (կասկածից վեր է, որ վայրը բնակեցված է եղել շատ ավելի վաղ ժամանակներից) վկայում են բնակավայրի ոչ միայն գոյության, այլև նրա կարևոր դերակատարության մասին արդեն վաղ միջնադարում:

Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները 1820-ական թթ. վերջերին փոխադրված խոյեցիների և սալմաստցիների, ինչպես նաև Մեծ Եղեռնից հետո Վանի նահանգից փրկվածների շառավիղներ են:

Սկսած 1831 թ.-ից մինչև մեր օրերը, որոշ անկումային ցուցանիշներով հանդերձ, ընդհանուր առմամբ գյուղն արձանագրել է բնակչության թվաքանակի զգալի աճ: Դա է վկայում ստորև ներկայացվող վիճակագրական տվյալների ժամանակագրական աղյուսակը.

տարեթիվ	հայ		քուրդ		ընդամենը	
	տուն	շնչ.	տուն	շնչ.	տուն	շնչ.
1831[2]	2	9				
1839[3]	11	74				
1842[4]	11		6		17	
1869[5]	53					
1873[6]	60	486	1	8	61	494
1886[7]					85	
1893[8]	86	684	1		87	
1897[9]						827
1906[10]	139	752	1	14	140	766
1908[11]						781
1909[12]		976				
1910[13]		997				
1911[14]	125					
1914[15]						1562
1917[16]	159					
1926[17]						1048
1931[18]		1100		30	230	1130
1937[19]		976				976
1939[20]						985
1959[21]						932
1970[22]		1190				1190
1979[23]						1392
1989[24]						1725
2001[25]		1914				1914
2004[26]						1857
2011[27]		1876				1876

Դպրոց. կրթական գործի կարևորության մասին գյուղացիները մտորել են դեռևս 1880-ական թթ. սկզբներին, համենայն դեպս, հայտնի է, որ արդեն 1884 թ. դպրոցը գործում էր[28]:

Ցարական իշխանությունների հրահանգով 1885 թ. փակվում է, սակայն հաջորդ իսկ տարում տրված վերաբացելու թույլտվությունից ինչ-ինչ պատճառներով գյուղացիներն անմիջապես չեն կարողանում օգտվել: Խնդիրը ձգձգվում է մինչև 1889 թ. փետրվարի 1-ը, երբ դպրոցը վերաբացելու մասին ստացվում է կաթողիկոսական կոնդակ[29]:

Դպրոցների գործունեությունը լուսաբանող տեղեկագրերում Բաշգյուղի մասին տվյալների բացակայությունը հուշում է, որ թերևս նյութական դժվարություններից ելնելով և հակառակ ձեռք բերված թույլտվության, այնուամենայնիվ, մինչև 1896 թ. դպրոցը չէր գործում, իսկ դրանից հետո էլ չէր կարող գործել՝ կառավարության հրահանգով հայկական դպրոցների գործունեությունը կասեցված (1896-1905 թթ.) լինելու պատճառով:

Հատկանշական է, որ ազգային դպրոցների վերաբացման թույլտվությունը ստանալուն պես (1905 թ.) գյուղացիները գործի են անցնում և նույն թվականի աշնանը վերաբացում հաստատությունը, որը, սակայն, մինչև 1910 թ., ըստ էության, չի կարողանում կանոնավոր հունի մեջ մտնել:

Դրությունն էականորեն բարեփոխվում է 1910 թ.-ից, որն էլ համարվում է դպրոցի վերաբացման տարի, ընդ որում, 1910/11 ուստարում դասատվությունն ընթանում էր երկու սենյակից բաղկացած հատուկ դպրոցի համար կառուցված սեփական շենքում: Դպրոցը երկամյա էր, երկսեռ, ուներ 1 ուսուցիչ և 45 սան (44 ար. և 1 իգ.)[30]: Հոգաբարձուներն էին Բարսեղ Հարությունյանը, Սմբատ Գասպարյանը, Ավետիս Մնացականյանը և Ռաֆայել Տեր-Մխիթարյանը[31]:

1911 թ. երկսեռ դպրոցն ուներ 1 ուսուցիչ, 45 աշակերտ (40 ար., 5 իգ.)[32]:

1911 թ. օգոստոսի 24-ին հոգաբարձուներ են ընտրվում Բարսեղ Հարությունյանը, Բարսեղ Ստեփանյանը և Արշակ Մկրտչյանը, որոնք պաշտոնավարում են նաև 1912/13 ուստարում[33]:

2 ՀԱԴ (Հայաստանի ազգային դիվան), ֆ. 90, ց. 1, գ. 93, թ. 27; գ. 319, թ. 20 շրջ. (որից՝ 4 ար., 5 իգ., փոխադրված Սալմաստից):
3 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 10, թ. 5 (որից՝ 46 ար., 28 իգ.):
4 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 81, մաս III, թ. 1ա (որից՝ հայ ար. շունչ՝ 44, մահմեդ.՝ 18 շունչ):
5 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 42, թ. 3:
6 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 177: Տե՛ս նաև գ. 195, թ. 3 (որից՝ հայեր՝ 255 ար., 231 իգ., քրդեր՝ 5 ար., 3 իգ.):
7 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 177:
8 **Էփրիկեան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-1905, էջ 707: Ըստ մեկ այլ տեղեկագրի նույն թվականին հայերը կազմել են 120 տուն (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8928, թ. 1, 2):
9 Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Երևան, 2008, էջ 13:
10 Памятная книжка Эриванской губернии на 1908 год, отд. III, Эривань, 1908, с. 2-3 (որից՝ 522 ար., 454 իգ.):
11 Кавказский календарь на 1910 г., Тифлис, 1909, отд. IV, с. 200.
12 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 284 (որից՝ 522 ար., 454 իգ.):
13 ՀԱԴ, ֆ. 7, ց. 1, գ. 156, թ. 11 շրջ.:
14 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 323, թ. 67 շրջ.:
15 Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, отдел статистический, с. 97.
16 ՀԱԴ, ֆ. 125, ց. 1, գ. 67, թ. 4:
17 ՀՀ բնակավայրերի բառարան, նույն տեղում:
18 ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ. բնակավայրերն ու ազգաբնակությունը, Երևան, 1936, էջ 38:
19 ՀԱԴ, ֆ. 163, ց. 23, գ. 141, թ. 9 (որից՝ 466 ար., 447 իգ.):
20 ՀՀ բնակավայրերի բառարան, նույն տեղում:
21 Նույն տեղում:
22 ՀՍՀ, հ. 1, Երևան, 1974, էջ 235:
23 ՀՀ բնակավայրերի բառարան, նույն տեղում:
24 Նույն տեղում:
25 Նույն տեղում (որից՝ 952 ար., 962 իգ.):
26 Նույն տեղում:
27 ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքները. Կոտայքի մարզ, Երևան, 2013, էջ 9:
28 **Խուդոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Երևան, 1987, էջ 82:
29 Նույն տեղում: Ի դեպ, ըստ մեկ այլ հաղորդման («Արձագանք», 1890, № 3, էջ 6), կոնդակում նշվել է. «...իրաւունք է շնորհել բանալ միդասեան տղայոց ուսումնարաններ ... Երևանի թեմի Բաշ գիւղում»:
30 ՀԱԴ, ֆ. 7, ց. 1, գ. 156, թ. 11 շրջ.-12: Նշվել է նաև. «Բաշգիւղի երկամեայ դասընթաց, խառն դպրոց, սեպհական շէնք, երկու սենեակ: Երկու բաժանմունքը միացած, զետեղուած են մի սենեակում: Մեկ դասատու է պարապում այս երկու բաժանման հետ: Դպրոցը ո՛չ գրադարան և ո՛չ էլ դասական որևէ պարագայ չունի...: Ուսուցիչն է Հմայակ Տէր-Յովհաննիսեան, Գ. ճեմ. V դաս. աւարտ. 1908 թ....: Սաների թիւն է 46, որից 1 աշակերտուհի և 45 աշակերտ են: Դպրոցի բիւդջէն հասնում է 400 ռուբլու» (ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 323, թ. 67 շրջ.):
31 ՀԱԴ, ֆ. 7, ց. 1, գ. 156, թ. 12:
32 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 65, թ. 4 շրջ.:
33 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 606, թ. 5; գ. 564, թ. 6:

1911/12 ուստարում գործում է որպես երկսեռ 3-ամյա դպրոց՝ 55 (52 ար., 3 իգ.) աշակերտով և 1 ուսուցչով[34]:

1912/13 ուստարում հիշվում է որպես 3 բաժանմունքով, 1 ուսուցչով, 60 աշակերտով (53 ար. և 7 իգ.) երկսեռ դպրոց[35]:

Ուսումնական տարին սկսվել է հոկտեմբերի 1-ից[36]:

Հոգաբարձուներն էին Բարսեղ Հարությունյանը, Բարսեղ Ստեփանյանը և Արշակ Մկրտչյանը[37]:

1913 թ. մայիսին նշվում է. «Բաշգիւղի եռամ. դասընթ. դպրոց, շէնքը սեպհական, երկու սենեակ, պատշգամբը կիսատ, յատակը հող, առաջարկվեց այս թերի մասերը լրացնել: Երեք բաժ. (I-III) միացած պարապում է ուսուցիչ Գրիգոր Բալասանեան, Ներսիս. դպ. աւարտ 1893 թ., 10-րդ տարեայ փորձառութեամբ: Սաների թիւն է 60, որից 53 տղայ և 7 աղջիկ են...: Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին սաների թիւը 75-ի է հասել»[38]:

1913/14 ուստարում ուներ 68 սան, որից միայն 3-ը՝ աղջիկ[39]:

1914 թ. գործում է եռամյա դասընթացով, մեկ ուսուցչով, դասասենյակի համատեղելիության համեմատ ավելի շատ՝ 60-70 աշակերտով: Դպրոցի տարեկան բյուջեն գոյանում է Կովկասի հայոց բարեգործական միությունից փոխանցվող 200 ռուբլի նպաստով և աշակերտական թոշակադրամով, որը միասին կազմում էր 422 ռուբլի[40]:

1918 թ. դպրոցն ուներ 88 սան և 2 ուսուցիչ[41]: Նույնքան ուսուցիչ է ունեցել նաև 1919 թ.[42]:

Խորհրդային տարիներից մինչ այժմ գյուղում գործում է միջնակարգ դպրոց: Ի դեպ, այն գավառում առաջիններից էր, որ արդեն 1911/12 ուստարում ուներ 150 կտոր գիրք պարունակող գրադարան[43]: Գրքերի թիվը 1912/13-ին հասնում էր 128-ի[44]:

Եկեղեցի. գտնվում է գյուղամիջում: Կառուցվել է ԺԹ դարում և օծվել Սբ. Կարապետի անվամբ[45]: Հիմնավերակառուցվել է 1900-ական թթ., որին հաջորդած օծումը տեղի է ունեցել 1913 թ. դեկտեմբերի 22-ին[46]:

Եկեղեցին ունի եռանավ բազիլիկ հիշեցնող հորինվածք (արտաքին չափերն են՝ 19,25 x 9,94 մ): Քարաշեն որմերն ու երկու զույգ սյուները պահում են փայտածածկ տանիքը: Երկու մուտքերը բացված են արևմտյան և հյուսիսային ճակատներից: Վերջինս բացվում է նույն կողմից եկեղեցուն կցված առաջին հարկում քառասյուն, իսկ երկրորդում՝ սրածայր վեղարով



Սբ. Կարապետ եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

ավարտվող վեց սյուների վրա կանգնած կրկնահարկ զանգակատան մեջ:

Շնորհիվ հարգարժան Վլադիմիր Գասպարյանի նախաձեռնությամբ 2006 թ. իրականացված նորոգության՝

Սբ. Կարապետ եկեղեցին հյուսիսից և արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1977 թ.)

Սբ. Կարապետ եկեղեցին ներկայումս բարեկարգ վիճակում է:

Սբ. Կարապետ եկեղեցու զանգակատան արևելյան ճակատին ագուցված է Սբ. Սարգիս զորավարի անվամբ օծված մի եկեղեցու շինարարական հնգատող կիսաեղծ արձանագրություն: Սա, ըստ ամենայնի, որևէ կապ չունի Սբ. Կարապետ ոչ ներկա-

ԺԷ դարի խաչքարի բեկոր՝ ագուցված Սբ. Կարապետ եկեղեցու հարավային որմում՝ ներքուստ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

34 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 564, թ. 6: Ուսուցիչն էր Շմավոն Մկրտչյանը:

35 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 606, թ. 5-6: Ուսուցիչն էր Գրիգոր Բալասանյանը (թ. 5): Տե՛ս նաև ց. 12, գ. 65, թ. 4 շրջ.:

36 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 65, թ. 4 շրջ.:

37 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 65, թ. 5:

38 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 388, թ. 24-25:

39 **Խուդոյան Ս.**, նույն տեղում:

40 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 390, թ. 40:

41 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, Երևան, 1999, էջ 77:

42 Նշվ. աշխ., էջ 111:

43 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 510, թ. 11:

44 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 564, թ. 6:

45 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 606, թ. 5 շրջ.: Տե՛ս նաև ց. 12, գ. 65, թ. 4 շրջ.:

46 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 641, թ. 69:



Սբ. Կարապետ եկեղեցին հյուսիս-արևմուտքից և հարավ-արևմուտքից, որմնանկարների մնացորդներ եկեղեցու խորանին հարակցող որմի արևմտահայաց ճակատներին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

յիս և ոչ էլ տեղում գոյություն ունեցած նախկին համանուն եկեղեցու հետ և զուտ պահպանության նկատառումներով ժամանակին այստեղ է փոխադրվել գյուղի հին, վաղուց ի վեր ավերակված, սակայն ցարդ իր անունն անմոռաց պահած եկեղեցատեղիից:

Սբ. Սարգիս եկեղեցի. գյուղամիջում՝ Մելիք Գալստյանի տնամերձ հողամասի եզրին է գտնվում վաղմիջնադարյան (ըստ ամենայնի, վերաբերում է Ե-Է դարերին) եկեղեցու մնացորդ, որից առկա են սոսկ պայտաձև խորանի հյուսիսային հատվածը և որոշ բեկորներ: Բնակիչները, այս եկեղեցին որ-

պես ուխտատեղի ընկալելով և մտահոգ նրա պահպանության խնդրով, խորանի հիշյալ հատվածի վրա մի պարզ շինություն են կանգնեցրել: Հիմք ընդունելով խորանի պահպանված հատվածի չափերը (խորանն ունեցել է 4,7 մ լայնություն և 3,1 մ խորություն)՝ պարզվում է նաև եկեղեցու արտաքին լայնությունը՝ 7,65 մ:

Եկեղեցին կառուցված է եղել համակ սրբատաշ քարերով, կրաշաղախով: Որմերին առկա են եղել վիմագրեր, որոնցից տեղում ոչինչ չի պահպանվել, սակայն հարկ է այս եկեղեցուն վերագրել բուն հուշարձանից փոքր հեռավորության վրա գտնվող երկու արձանագրություն:



Սբ. Սարգիս եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

Առաջինը գյուղի գերեզմանոցի հին մասում գտնվող արձանագիր մի բեկոր է՝ ակնհայտորեն օժտված ցարդ հայտնի գրչության վաղագույն նմուշներին բնորոշ ոճական առանձնահատկություններով: Վիմագրի պահպանված հատվածից երևում է, որ այն մի ընդարձակ արձանագրության միջնամասն է և թերի է ինչպես աջ և ձախ կողմերից, այնպես էլ ստորին մասից: Մեզ հասած եռատող արձանագրությունից ընթերցվում է հետևյալը.

...ակութենէ եւ յ... / ...ակս մեղուցեալ հոգո ... / ...:

Սբ. Սարգիս եկեղեցուն վերաբերող երկրորդ արձանագրությունը, որի մասին արդեն հիշատակել ենք վերևում, դեռևս Ի դարի սկզբներին ագուցվել է Սբ. Կարապետ եկեղեցուն հյուսիսից կից զանգակատան արևելյան ճակատի վերնամասում: Վերջինիս առաջին տողը, որտեղ, ըստ ամենայնի, փորագրված է եղել տարեթիվը, գրեթե ամբողջապես անընթեռնելի է (քարն այդ մասից ամբողջ երկարությամբ կիսված է): Մնացյալ հատվածում ընթերցվում է.

...|ցը Սարգիս շինեցի... / ...սի յանուն սրբոյն Սարգ|սի զաւրավարինը ս(ուր)ք էկե|[ղե]ցի, որք հանդիպիք, յիշ[ե]ց[է]ք ...:

Արձանագրության վերաբերյալ հարկ ենք համարում նաև նշել, որ թեև այն ունի շինարարական բովանդակություն, սակայն դատելով գրչագրական առանձնահատկություններից (ուներ ԺԵ-ԺԶ դարերին բնորոշ գրչագրությանը հարազատ տարրեր)՝ վերջինս կարող էր վերաբերել միայն եկեղեցու վերաշինությանը (գուցեև հիմնավերակառուցմանը):

Սբ. Սարգիս եկեղեցու խորանին հարող հատվածի մնացորդները, ճարտարապետական և արձանագիր բեկորներ գերեզմանոցում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)





Սբ. Սարգիս եկեղեցու՝ ԺԵ-ԺԶ դարերում իրականացված վերաշինության մասին պատմող արձանագրությունը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Ակունք գյուղի գերեզմանոցի հին հատվածը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Գերեզմանոց. բազմադարյան և ակներևաբար հազարավոր հանգուցյալներ ամփոփած գերեզմանոցը գտնվում է գյուղի հարավային եզրի հյուսիս-արևմտահայաց բլրալանջին և նույն բլրի ստորոտին: Այստեղ գերակշռում են անմշակ սալատապանները, բայց և պահպանվել են նաև խաչքարեր (ուշ-միջնադարյան) և մշակված տապանաքարեր:

Տապանաքար. օրորոցաձև, արձանագր.՝ 2 տող.

Այս է տապան Թաթոս/ի որդի տ(է)ր Ղուկասին, թվ(ին) Ռ...:

Ծանոթ. ըստ գրչագրական առանձնահատկությունների՝ կարելի է թվագրել ԺԷ դարի 2-րդ կեսով:

Տապանաքար. օրորոցաձև. արձանագր.՝ 5 տող.

[Այս է] տապան Կալուստին, որ է որդի Ս.../... թոռն՝ Ափին եւ Մարիամին, թիվ .../... ու երկու հարիւր քառսուն երեքին (1794), ս.../ ...եաց առ տ(է)ր կենդանին, ով որ կարդա, ա(ստուա)ծ ո[ղո]/ղմի ասին:

Տապանաքար. ուղղանկյունաձև, արձ.՝ 6 տող.

Աստ հանգչի / մարմին Մկր/տիչ Մանու/կեանի, վախճա/նեաց ի 21 ապր/ի-լի, 1834 ամի:

Տապանաքար. ուղղանկյունաձև, արձ.՝ 2 տող.

Ա(յս) է տապան Սարխոշին, որ է որդի Մանո(ւ)կին, / 71 ամի եղեւ կեցուդեան, 1867 ամի վախճ(ա)/ն:

Տապանաքար. ուղղանկյունաձև, արձ.՝ 4 տող.

Աստ հանգչի գնդահար Սումբ/աթ Սարգիսեան Տէր-Գրիգորեանցի / մարմին, վախճանեցաւ նոյեմբերին 22, / 1898 ամի, 21 ամաց հասակ:

Տապանաքար. ուղղանկյունաձև, արձ.՝ 3 տող.

Դամբարան Սէռայ Նավասակեանի մի/ամօր դուստր Ներինդոսի, 18 ամեայ / հասակի հանգեաւ, 1903 ամի, յ(ու)նվ(ա)րի 3-ին:

Խաչքարեր գերեզմանոցի հին հատվածում, ԺԵ-ԺԸ դարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

ԺԷ դարի 2-րդ կեսի, 1794 և 1867 թթ. տապանաքարեր գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

1834, 1898 և 1903 թթ. տապանաքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Հատիս լեռը (2522 մ) և նրա հարավային ստորոտի ժայռապարը, որի ներքո գտնվում է Սբ. Պողոս-Պետրոս վանքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Սբ. Պողոս-Պետրոս վանք. գտնվում է գյուղից հազիվ 1 կմ հյուսիս-արևելք՝ Հատիս լեռան բնական հենապատի տեսք ունեցող ժայռապարով ավարտվող ստորոտին. «Եւ ընդ հիւսիս իբրև քառորդ մի ժամու ի հարաւային ստորոտի լերին Շամիրամայ ի ծոցաւոր ինչ տեղւոջ է գերեզմանուտ. և կիսաւեր մատրունք Բ, ի նմա»[47]:

Երբեմնի վանական համալիրից ցարդ պահպանվել են միմյանցից շուրջ 30 մ հեռավորության վրա գտնվող միանավ բազիլիկ հորինվածքով զույգ եկեղեցիներ, որոնցից վերինը 1890 թ. իրականացված մասնակի նորոգությունների շնորհիվ ցարդ ամբողջական է (արտաքին չափերն են՝ 5,73 x 4,31 մ) և նկարագրվել է դեռևս 1947 թ. «Կանգուն եկեղեցին փոքր է, ուղիղ քառանկյունի հատակագծով, սուր երկթեք, թաղակապ ծածկով, շարված սև ու կարմիր տուֆի տաշված քարերով, կրաշաղախով, դուռն արևմտյան կողմից է»[48]:

Հարկ է ավելացնել, որ, ըստ եկեղեցու հյուսիսային որմին արտաքուստ պահպանված շինարարական արձանագրության, մեկենաս և նվիրատու Ասլան և Վիրապշահ եղբայրները, սույն եկեղեցուց զատ, միաժամանակ կառուցել են նաև ժամանակի ընթացքում իսպառ ավերված մի գավիթ, որի քառատող արձանագրությունը հետևյալն է.



Սբ. Պողոս-Պետրոս վանքի գլխավոր հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

Սբ. Պողոս-Պետրոս վանքի վերին եկեղեցին արևմուտքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Մ. Կարապետյանի, 2014 թ.)

Շնորհիւն ա(ստուծո)յ ես՝ Ասլանս, եւ եղբայր իմ Վիրապշահ շինեց/աք զեկեղեցիս եւ զգաւիթս եւ տուաք արդիւն սմա այգի եւ հող / եւ սահմանեցաք զյայտնութե(ան) ճրագալոյցսն եւ զվաղիւսն, եւ / զատկին մեր առնեն եւ ծնողացն կատարիչն աւրհնի յա(ստուծո)յ:

Ինչ վերաբերում է սույն անթվակիր արձանագրության փորագրման ժա-

47 **Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ., էջ 161-162:

48 ՀԱԴ, ֆ. 1063, ց. 1, գ. 1403, թ. 2-3 (ի դեպ, համառոտ նկարագրության հեղինակն այն համարել է ԺԷ դարի կառույց):



Սբ. Պողոս-Պետրոս վանքի վերին եկեղեցին հարավ-արևելքից, հյուսիսից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.) և հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)



մանակին, ապա գրչագրության ոճական և գեղարվեստական առանձնահատկությունները թույլ են տալիս վիմագիրը բավականաչափ վստահորեն վերագրել ԺԳ դարի 2-րդ կեսին, որով և եկեղեցու կառուցումը՝ նույնպես:

Եկեղեցու արևմտյան ճակատի հյուսիսակողմին առկա է 1890 թ. իրականացված նորոգության վեցատող հիշատակագրությունը.

Վանքս նորոգե/ցաւ ի 1890 ամի ար/-դեամբք Ստե/փան / Տեր-Գր/իգորեանցի, / բաշգիւղացի:

Ի դեպ, նորոգողն ինքն էլ հանգչում է հենց եկեղեցու առջև զետեղված տապանաքարի ներքո, որի հարավային նիստին արձանագրված է.

Աստ հանգչի Ստեփան Տէր/-Գրիգոր(ա)ն՝ նորոգող սոյն վան/քս, վախճանեցաւ 1898 թ., 85 ամեայ / հասակի:

Սբ. Պողոս-Պետրոս վանքի նորոգության հիշատակագիրը (1890 թ.) և նորոգողի (1898 թ.) տապանագիրը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Սբ. Պողոս-Պետրոս վանքի վերին եկեղեցու արևմտյան ճակատից բացված լուսամուտի շրջանակը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2007 թ.)

Վանական համալիրի երկրորդ կամ ներքին եկեղեցին նույնպես միանավ թաղածածկ բազիլիկ է (արտաքին չափերն են՝ 7,17 x 6,65 մ), սակայն, ի տարբերություն վերին եկեղեցու, սա մեկի փոխարեն ունի երկու ավանդատուն, ընդ որում, երկուսն էլ՝ կառույցի հյուսիսային կողմում: Ի դեպ, այս եկեղեցու համառոտ նկարագրությունը ևս տրվել է դեռևս 1947 թ. «Արևելյան կողմից ունի աբսիդա, հյուսիսային կողմում, պատի ամբողջ երկարությամբ՝ 2 հատ խորան, որոնք արևելյան կողմից ունեն կիսակլոր աբսիդա, իսկ դռները բացվում են դեպի հարավ՝



Սբ. Պողոս-Պետրոս վանքի ներքին եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

Սբ. Պողոս-Պետրոս վանքի ներքին եկեղեցին արևմուտքից, հատված նույն ճակատից և արևմտյան ավանդատան ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

եկեղեցու մեջ: Շարված է եղել կարմիր տուֆի սրբատաշ քարերով, կրաշաղախով...»[49]:

Նշվածին հարկ է ավելացնել, որ դատելով եկեղեցու մուտքի՝ իրենց նախնական տեղում պահպանված քանդակավոր անկյունաքարերից՝ կառույցն ունեցել է ոչ պակաս շքեղ մուտք, քան վերին եկեղեցին, ինչպես նաև նվիրատվական ընդարձակ արձանագրություններ, որոնցից երկուսը երկուական քարերին մեծ մասամբ դեռևս ընթեռնելի են: Առաջինը նշյալ մուտքից հյուսիս շարվածքի առաջին շարքին պատկանող երկու քարերի վրա է և կազմված է հինգ տողից.

Ես՝ Յուսէփ ...Ա (1) չա[ր]/էք ջաղաց ...կ եւ սպասաւորքս | խոստացան ի տարին Ա (1) ժամ: Ես՝ Յովան/նէս, տվի ինչք յ..., եւ եղբարքս խոստ/ացան ի տարին աւր ժամ ի տաւնի Յովաննու:

Երկու մասից բաղկացած անթվակիր վիմագիրը, ըստ բովանդակության և գրչագրական առանձնահատկությունների, վերաբերում է ԺԳ դարին:

Նույն ժամանակաշրջանին է վերաբերում նաև երկրորդ՝ քառատող վիմագիրը, որից դարձյալ երկու բեկոր է պահպանվել: Դրանք նույնպես ագուցված են վերակառուցված եկեղեցու որմերում պատահական տեղադրությամբ և բովանդակում են հետևյալը.

...առաջնորդութե(ան) ս(ուր)ք ուխտի(ս) ... | ...ուղար աթապակ եւ ամ(ի)ր-սպասալար ... ...ցս եւ տվա[ք]..., | ...եւ միայբանքս խոստացան ... Բ (2) ժամ ի տա[ր]/ին, Ա (1) ինձ, Ա (1)՝ իմ մաւ[ոն]... ...դ, խափանողն դ[ատի յաստուծոյ]...[50]:

Եկեղեցու ներսում ագուցված բեկորներից մեկի վրա էլ ընթերցվում է մեկ այլ (գուցե հենց վերջին) արձանագրության վերջնամասը.



49 ՀԱԴ, ֆ. 1063, ց. 1, գ. 1403, թ. 3:

50 Նշվ. գործը, թ. 3-4: Սոսկ առաջին քարի արձանագրությունը մասնակի ընթերցվել է 1947 թ.:

Սբ. Պողոս-Պետրոս վանքի ներքին եկեղեցու որմերում նորոգությունների ժամանակ ագուցված գեղաքանդակ խաչքարերի բեկորներ, ԺԲ-ԺԴ դդ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

...նզոված է:

Եթե այս ամենին գումարենք նաև զարգացած միջնադարին պատկանող

այն բազմաթիվ գեղաքանդակ խաչքարերի մնացորդները, որոնք փաստում են տեղում դեռևս 1839 թ. արձանագրված, սակայն 1890 թ. իրականացված նորոգությունների ընթացքում, ըստ էության, ամբողջովին ոչնչացված խաչքարաշատ երբեմնի գերեզմանոցի (հուշարձանները համատարած կերպով յուրացվել են իբրև շինանյութ) առկայության մասին, որոնք հիմնականում ագուցվել են ներքին եկեղեցու որմերում, ապա միանգամայն պարզ կդառնա, որ Սբ. Պողոս-Պետրոս վանքն իր ժամանակի ծաղկուն և կալվածաշատ վանքերից մեկն է եղել, որտեղ բազմաթիվ պատարագներ են մատուցվել՝ ի պատիվ զանազան նվիրատուների:

Ի դեպ, 2014 թ. հունիսին հնավայրում ընթանում էին հնագիտական պեղումներ, որոնք անվերապահորեն նոր լույս կսփռեն Սբ. Պողոս-Պետրոս վանքի պատմության բազմադարյա անցյալին:

Նորագույն շրջանին պատկանող հուշարձաններից Ակունք գյուղում ուշագրավ է Սբ. Կարապետ եկեղեցու հարևանությամբ կառուցված Երկրորդ աշխարհամարտում զոհված համագյուղացիների հիշատակը հավերժացնող հուշարձանային համալիրը:

Կալաչա ամրոց. գտնվում է գյուղի հարավային բլրի վրա: Զբաղեցնում է մոտ 2 հա տարածք: Բլրագագաթն ամրացված է անմշակ, խոշոր որձաքարերով առանց շաղախի շարված պարսպով, որն ունի մոտ 2 մ հաստություն: 1947 թ. արտաքուստ նկատելի էին ուղղանկյուն հենապատերի հետքերը[51]:

51 ՀԱԴ, ֆ. 1063, ց. 1, գ. 1403, թ. 4:

Սբ. Պողոս-Պետրոս վանքի ներքին եկեղեցին 2014 թ. հունիսին ընթացող հնագիտական պեղումների ժամանակ. հատվածներ եկեղեցու հարավային ճակատի՝ արևելյան և հյուսիսարևելյան անկյուններին հարող նորաբաց մասերից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Երկրորդ աշխարհամարտում զոհված ակունքցիների հիշատակը հավերժացնող հուշահամալիրը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Տեղադրություն. գտնվում է Աբովյան քաղաքից 4,5 կմ հարավ-արևելք՝ Հատիս լեռան հարավային ստորոտին՝ Ակունք և Արամուս գյուղերի միջակայքում: Ծովի մակերևույթից բարձր է 1442-1462 մ:

Անվանում. նախկինում հայտնի էր Աղաձոր, Աղասոր, Աղազոռ կամ Աղազոր անվամբ: 1946 թ. վերանվանվել է Կաթնաղբյուր:

Պատմություն. ըստ գյուղում պահպանված պատմական հուշարձանների ուսումնասիրության՝ բնակավայրը գոյություն է ունեցել առնվազն միջնադարից և եղել է գավառի զուտ հայաբնակ և ծաղկուն գյուղերից մեկը (առանձնապես ԺԲ-ԺԳ դարերում):

Բնակչություն. ըստ ամենայնի՝ ներկայիս Կաթնաղբյուրը զուտ հայաբնակ է եղել մինչև 1604 թ. պարսից Շահ Աբասի գլխավորությամբ իրագործված Այրարատյան նահանգի ողջ հայ բնակչության բռնագաղթեցումը, որից հետո՝ մի կարճ ժամանակ, ամայի էր: Գյուղը վերստին շենացել է, սակայն, ինչպես երևում է, բնիկներից զատ, գյուղում արդեն հայտնվել էին նաև խանական կառավարիչների հովանավորությունը վայելող եկվոր մահմեդականներ: Համենայն դեպս, այդ պատկերն է արձանագրել բնակչության թվաքանակին վերաբերող առաջին՝ 1831 թ. վիճակագրական տեղեկագիրը, որից պարզվում է, որ 12 ընտանիքից 9-ը տեղացի հայեր էին, իսկ 3-ը՝ եկվոր մահմեդականներ[52]:

Ներկայիս բնակիչները վկայում են, որ բնիկներից զատ՝ համագյուղացիների մի մասը սերում է Խոյից, իսկ ավելի նվազ չափով՝ Սալմաստից, սակայն չեն հաստատում Արևմտյան Հայաստանից և մասնավորապես Բայազետի շրջանից սերող հայերի առկայությունը, որն արձանագրվել է նախկին որոշ հրատարակություններում[53]:

Ավելի քան 170 տարիների ընթացքում գյուղի բնակչությունը, ընդհանուր առմամբ բնական վերարտադրության շնորհիվ աճ արձանագրելով հանդերձ, մասնավորապես 1910-ական թթ. երկրորդ կեսին և 1930-1950-ական թթ. ունեցել է նաև նվազման իրողություններ: Ասվածի մասին առավել հստակ պատկերացում կազմելու համար առաջարկում ենք սույն աղյուսակը.

տարեթիվ	հայ		թաթար		ընդամենը	
	տուն	շնչ.	տուն	շնչ.	տուն	շնչ.
1831[54]	9	42	3	27	12	69
1839[55]	7	36				
1842[56]	8		2		10	
1869[57]	25					
1873[58]	25	142	2	14	27	156
1886[59]	32					
1893[60]	30	155	2		32	
1897[61]						169
1906[62]	38	170	2	16	40	186
1908[63]						191
1909[64]		287				
1914[65]						277
1926[66]						279
1931[67]					63	300
1937[68]						279
1939[69]						285
1959[70]						228
1970[71]						330
1979[72]						400
2001[73]		577				577
2004[74]						637
2011[75]		609				609

Եկեղեցի. Կաթնաղբյուրի Սբ. Աստվածածնի անվամբ օծված ծխական եկեղեցին ԺԹ դարի քարաշեն կառույց է (արտաքին չափերն են՝ 12,76 x 7,71

52 ՀԱԴ, ֆ. 90, ց. 1, գ. 93, թ. 25-26; գ. 319, թ. 18 շրջ.-20: Ընդ որում, հայերը բաղկացած էին 42 շնչից՝ 22 ար. և 20 իգ., իսկ թաթարները՝ 27 (13 ար. և 14 իգ.):

53 Օրինակ՝ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 884: ՀՀ բնակավայրերի բառարան, Երևան, 2008, էջ 104:

54 ՀԱԴ, ֆ. 90, ց. 1, գ. 93, թ. 25-26; գ. 319, թ. 18 շրջ.-20:

55 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 10, թ. 5 (որից 18-ը՝ ար., 18-ը՝ իգ.): Տե՛ս նաև **Շահխաթունեանց Յ.**, նույն տեղում:

56 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 81, մաս III, թ. 1բ (այդ թվում՝ 23 հայ և 5 մահմեդական արական բնակիչ):

57 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 42, թ. 3:

58 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 177, թ. 248: Տե՛ս նաև գ. 195, թ. 3:

59 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 195, թ. 3:

60 **Էփրիկեան Ս.**, նույն տեղում:

61 ՀՀ բնակավայրերի բառարան, նույն տեղում:

62 Памятная книжка Эриванской губернии на 1908 год, отд. III, Эривань, 1908, с. 2-3.

63 Кавказский календарь на 1910 г., Тифлис, 1909, отд. IV, с. 172.

64 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 284 (որից՝ 186 ար., 101 իգ.):

65 Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, отдел статистический, с. 83.

66 ՀՀ բնակավայրերի բառարան, նույն տեղում:

67 ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ. բնակավայրերն ու ազգաբնակությունը, էջ 38 (որից 162-ը՝ ար., 138-ը՝ իգ.):

68 ՀԱԴ, ֆ. 163, ց. 23, գ. 141, թ. 10 (որից 151-ը՝ ար., 128-ը՝ իգ.):

69 ՀՀ բնակավայրերի բառարան, նույն տեղում:

70 Նույն տեղում:

71 Նույն տեղում:

72 Նույն տեղում:

73 Նույն տեղում (որից՝ 281 ար., 296 իգ.):

74 Նույն տեղում:

75 ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքները. Կոտայքի մարզ, Երևան, 2013, էջ 10:

մ), որ թերևս հիմնվել է ավելի հին եկեղեցու տեղում: 1963 թ. փլուզվել է և ցարդ շարունակաբար ենթարկվում է բնության քայքայիչ ներգործության:

Թվում է, թե ծածկված է եղել փայտամածով: Ունի ուղղանկյուն հատակագիծ, արևելքում կիսաշրջան խորան՝ առանց ավանդատների: Միակ մուտքը բացված է արևմտյան ճակատից: Խորանում որպես սեղանի վեմ քար է ծառայում ԺԵ-ԺԶ դարերում կերտված և գլխիվայր կանգնեցված մի խաչքար: Եկեղեցու կառուցման ժամանակ սոսկ իբրև շինանյութ ագուցվել են մի քանի խաչքարեր ևս:



Կաթնաղբյուր գյուղի գլխավոր հատակագիծն ըստ Google Earth (2013) արբանյակային լուսանկարի (հրատարակության պատրաստեց Ա. Հակոբյանը) և Սբ. Աստվածածին եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

Գերեզմանոց. գտնվում է գյուղի հարավարևելյան եզրին: Պարունակում է մի քանի տասնյակ անմշակ սալատապաններ, ուղղանկյունաձև տապանաքարեր, մի քանի գեղաքանդակ խաչքարեր և վերջիններիս պատկանող թափուր մնացած պատվանդաններ:

Պահպանված տապանագրերն էլ միայն ԺԹ-Ի դարերից են: Դրանցից թերևս ուշագրավ են գյուղի վերջին հոգևոր հովիվների տապանագրերը.

Մուրադյան տեր Հակոբ Նավասարդի, ծ. 1840 թ., մ. 1909 թ.:

Նավասարդյան տեր Խաչատուր տեր Հակոբի, ծ. 1869 թ., մ. 1924 թ.:

Գերեզմանոցի միջնադարյան հատվածի մի զգալի մասը ներկայումս ցավալիորեն հայտնվել է նորագույն ժամանակների թաղումների ներքո, որով ոչ միայն աղճատվել է հնավայրի ընդհանուր տեսքը, այլև ակնհայտորեն տուժել են գերեզմանական մի շարք

Սբ. Աստվածածին եկեղեցին հյուսիս-արևմուտքից, հարավ-արևելքից, հարավից և արևմուտքից, սեղանի վեմքար ծառայող խաչքարը խորանի կենտրոնում և խաչքարի բեկոր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Գերեզմանոցի հին հատվածը, խաչքարեր (ԺԲ-ԺԳ դդ. և ԺԵ-ԺԶ դդ.), խաչքարի պատվանդան և ԺԷ-ԺԸ դդ. տապանաքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

հուշարձաններ (առկա են ինչպես տեղահանվածներ, այնպես էլ իրենց սկզբնական վայրից հեռացվածներ):

Սրբատեղի «Կապույտ հազ». գերեզմանոցի հյուսիսային եզրին՝ բլրի արևմտյան ստորոտին է գտնվում իր նախնական տեղում և ամբողջական տեսքով պահպանված մի խաչքար, որին ավանդաբար վերագրվել է բուժիչ հատկություններ:

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
Ֆանտան
Լուսակերտ
Գութանասար, 2299
Նուռնուս
Զրաբեր
Սեւ Կատար, 3225
Հատիս
Դիլիջան
Նոր Գեղի
Կապուտան
Բյուրեղավան
Հատիս, 2529
Զովաշեն
Նոր Հաճն
Ագվնի
Ակնասար, 3258
Ակնա լիճ, 3032
Կոտայք
Պողոս-Պետրոս
Ակունք
Սեւաբերդ
ԱԲՈՎՅԱՆ
Սեւաբերդ
Պտղնի
Նորգյուղ
Գետամեջ
Բալահովիտ
Զառ
Քանաքեռավան
Կաթնաղբյուր
Մայակովսկի
Արամուս
Կամարիս
Առինջ
Գեղաշեն
Գետառ
Աժդահակ, 3597
Զորաղբյուր
Զովք
ԵՐԵՎԱՆ
Զրվեժ
Ողջաբերդ
Գեղադիր
Գեղարդ
Գեղարդավանք
Գողթ
Հացավան
Գառնի

Յուրաքանչյուր ազգի պատվաբեր պարտքն է ճանաչել հարազատ օրրանը և ուսումնասիրել Հայրենիքում արարված նախնյաց հիշատակները:

Հայոց Հայրենիքում պատմական հուշարձանները հազարամյակների ընդգրկում ունեն և անհամրելի քանակով ու մեծ խտությամբ տեղաբաշխված են Հայկական ողջ բարձրավանդակում:

Ի տարբերություն բազում ազգերի, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է հայրենի նյութական մշակույթի հուշարձաններին առնչվող ուսումնասիրական տարաբնույթ աշխատանքներ և լուծում նաև դրանց պահպանության խնդիրները, մեր պարագայում նույնն անելու հնարավորությունը հիմնականում սահմանափակված է Հայոց Հայրենիքի՝ սոսկ հայկական պետականության սահմանների ներքո գտնվող տարածքում, ինչպես նաև որոշ պատմական գաղթավայրերում: Այսինքն՝ պատմական անցքերի բերումով հայ ազգի ներկա սերնդին է ժառանգվել մի իրականություն, որն էապես տարբերվում է շատ ու շատ ազգերի առջև նույն ոլորտում ծառացած խնդիրներից:

Այո՛, հեշտ չէ նախնյաց հիշատակներին հետամուտ լինել մանավանդ ցեղասպանության ճանապարհով Հայրենիքիդ տիրացած օտար պետության տարածքում:

Հայրենիքը, անկախ նրա բռնազավթված կամ ազատագրված լինելու իրողությունից, սրբազան է, որտեղ պատմական հուշարձաններն էլ հավաքական առումով Երկիր մոլորակի տվյալ հատվածը հայ ազգին ի բնե վերապահված լինելու մասին ազդարարող «գրանցման վկայականներ» են, որոնք իրենց իսկ գոյությամբ էլ մատնում են պատմական իրականությունը և դրանով անհանգստություն պատճառում որոշ զավթիչ հարևանների:

Ահա այս ըմբռնումների և պարտականությունների գիտակցման թելադրանքով էր, որ սկսած 1969 թվականից՝ ճարտարապետ Արմեն Հախնազարյանը լծվում է Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի պատմական հուշարձանների փաստագրման գործին և ժամանակի ընթացքում առաջ մղելով աշխատանքները՝ 1982 թ. Գերմանիայի Ախեն քաղաքում հիմնում «Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող» հասարակական կազմակերպությունը:

Տարեցտարի լայնացնելով իրականացվող աշխատանքների ծավալները՝ արդեն 1996 թ. կազմակերպությունը պաշտոնական գրանցում է ստանում ԱՄՆ-ում (Լոս Անջելես), իսկ 1998 թ.՝ նաև Հայաստանի Հանրապետությունում (Երևան): Վերջինս նախ 2000 թ. վերագրանցվում է, իսկ 2010 թ., անփոփոխ պահելով անվանումը, վերակազմավորվում որպես հիմնադրամ:

45-ամյա գործունեության ընթացքում (1969-2014) հիմնադրամն իրականացրել է շուրջ 240 գիտարշավներ դեպի Պատմական Հայաստանի տարբեր շրջաններ, գավառներ և պատմական գաղթավայրեր:

Ստեղծվել է արդեն 400.000 միավորի սահմանագծին մոտեցող թվայնացված պատկերների շտեմարան, որի մաս են կազմում մի քանի հազար չափագրություններ, գրաֆիկական և քարտեզագրական նյութեր:

Ստեղծվել է նաև բնակավայրերի պատմությանն առնչվող տվյալների հատուկ շտեմարան, որն արդեն իսկ հնարավորություն է ընձեռում հյուսելու Մեծ և Փոքր Հայքերի տարածքում գտնվող ցանկացած բնակավայրի պատմությունը:

ՀՃՈՒ հիմնադրամը, սկսած 1997 թ.-ից, ձեռնամուխ է եղել ավարտված ուսումնասիրությունների հրապարակման գործին, որով և անցած տարիներին լույս են ընծայվել ավելի քան 60 միավոր գրքեր, գրքույկներ, քարտեզներ և տպագիր այլ նյութեր:

2006 թ.-ից ի վեր հիմնադրամը ստեղծում է նաև վավերագրական ֆիլմեր:

Ինչպես հրատարակությունները, այնպես էլ վավերագրական ֆիլմերը զետեղված են համացանցում:

Գրքի ստեղծման և տպագրության հովանավոր
ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

http://www.armenianarchitecture.am http://www.raa.am RAA Armenia raayer@sci.am (37410) 52 15 25

Տպագրված է «Բյուրակն» հրատարակչատանը
ԵՐԵՎԱՆ
ՀՃՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄ
2014